(մարդ) ուղարկեցին, բերին Իսմայիլին և ցույց տվին զորքին՝ ասելով, թե սա Ջհանշահի թոռն է և Յաղուբի քեռորդին, սրան է արժան թագավոր դնել: Այս բանին ամենը համաձայնվեցին և նրան թագավոր կարգեցին: Սա քաջ և ուժեղ մարդ էր և պատերազմներում զորեղ: Սա իր թագավորության ժամանակ հալածեց Ալվանդին և հնազանդեցրեց զորքը: Ինը հարյուր հիսուն թվին (1501 թ.) սա դարձավ թագավոր: Ինը հարյուր վաթսուներեք թվին ոմն Սալիմա եղավ ավազակ և թաքուն հարձակվեց շահի զորքերի վրա ու շատերին կոտորեց: Իսկ շահը նրա դեմ զորքեր ուղարկեց և հալածեցին նրան ու նրա զորքերը: Սրա մասին պատմում են հետևյալ զրույցը. «Փորում էր հողը և հոր էր անում, խոյ էր բերում և մինչև եղջյուրները թաղում էր հողում, իսկ ինքը ձի էր հեծնում և հեռվից արշավում էր, երբ մոտենում էր խոյին, ձիուց կռանում և բռնում էր խոյի եղջյուրներից և ցնցմամբ վեր էր քաշում գբից, երեք անգամ պտտեցնում էր իր շուրջը և գցում էր իր առջևը, որին ձին չէր հասնում: Այս պատճառով նա անվանվեց Ղոչղափան, այսինքն՝ խոյաբարձ: Շահի քաջությունը պատմեցին օսմանցիների սուլթան Սելիմ թագավորին, սա պատգամավորներ ուղարկեց շահի մոտ, որպեսզի պատերազմով հանդիպեն միմյանց: Խոսքը հաստատվեց ու պայման դրին, որ Չըլդր[31] դաշտում պատերազմեն:

Իսկ շահը գտնելով նույնանուն ոմն Իսմայիլ և նրան ձևացրեց թագավոր, դարձրեց կուսակալ և նրան պատվեր տվեց, թե որ պատահի իրեն սպանեն կամ բռնեն, դու մնաս կենդանի, լինես արյաց ազգի թագավոր: Բոլոր մեծամեծների առջև Շահ Իսմայիլ անվանվածը ընդունեց այս պատվերը և մնաց իսկական շահին հնազանդ: Եվ 964 թվին սկսվեց պատերազմը: Օսմանցիների զորքերի բազմության պատճառով պարսից զորքը դիմեց փախուստի: Ասում են՝ 80 հազար ենիչերի[32] հետապնդեցին շահին, իսկ շահը քիչ մարդկանցով խույս տվեց և պահվելով ինչ-որ տեղում՝ թաքնվեց: Իսկ նրանք բռնեցին շահ անվանված կարծեցյալ Իսմայիլին, կարծելով, թե իսկական շահն է, որովհետև շահի նշան ուներ: Առնելով տարան իրենց Սելիմ թագավորի մոտ: Սելիմը նրան հարցրեց. «Դո՞ւ ես Շեյխսաֆու թոռ և Շեյխ Հայդարի որդի Շահ Իսմայիլը»: Իսմայիլը պատասխանում է, թե ես արժանի չեմ շահ կոչվելու, այլ շահի ետնյալ ծառան եմ: Թեպետ նրա անվանակիցն եմ, սակայն

անվանակցությունը ինձ համար մեծություն չէ, այլ իմ տեր Շահ Իսմայիլի՝ իմ անվանակցի նվաստ ծառան եմ: Սելիմն ասում է. «Քո ազգը անիծիր, իսկ ես քեզ կազատեմ»: Իսմայիլը ասում է. «Անեծք թող ընկնի նրանց վրա, որոնք իմ ազգը ուրանում են. և թող նզովվես դու և անիծվես, որ մարդ ես, օրենք ու դավանություն չունես և ոչ էլ հավատի կրոն»: Եվ երբ այս լսեց նրանից՝ արհամարհանք իր և իր ազգի նկատմամբ, հրամայեց քարկոծել նրան: Իսկ նա միշտ զոհ էր իր ազգից և անիծում էր ու հայհոյում օսմանցիներին: Ասում էր. «Գնացեք, պատմեցեք իմ անվանակից տիրոջը, թե քո նույնանուն ծառան հանուն քո անվան սիրո նահատակ դարձավ: Իսկ դու մի թողնիր իմ արյունը եզդի քրդերին (վրիժառու եղիր) և թիթեռ մի իջեցնի իմ իջևանի հանգրվանում» (ուզում է ասել՝ իմ վրեժը լուծիր, մի թողնիր, որ ես մոռացվեմ):

Եվ քարկոծեցին նրան, և նա մեռավ, իսկ այլ կալանավորներ, որ այնտեղ էին գտնվում և ազատվեցին փոխարինվելով, գնացին, պատմեցին շահին: Այդ պատճառով պարսից երգիչները նրա մասին երգեր հորինեցին ըստ նրա խոսքի: Իսկ երբ շահը լսեց Իսմայիլի մահը և պատվիրանը, հրավիրակներ ուղարկեց սաստով իր ողջ տերության տարածքը (զորակոչ անելու): Եկան ու հավաքվեցին անթիվ ու անհամար ոչ միայն ազնվական զորքեր, այլև ռամիկներ, հողագործներ, մինչև իսկ կանայք: Շահը բացեց իր գանձատունը և ամենքին առատ ոռճիկներ բաշխեց և հորդորեց գնալ օսմանցիների վրա: Լրտեսները գնացին պատմեցին Սելիմին: Իսկ նա քմծիծաղով հեգնեց՝ ասելով. «Նա, ինչ որ տեսավ և կերավ ինձնից, ինչպե՞ս կհամարձակվի գալ ինձ վրա»: Նույնիսկ նա զորակոչ արեց և գնաց Դամասկոսի վրա, որ Շամն է:

Իսկ շահը ելավ, զորքով գնաց օսմանցիների կողմը և շատ տեղեր քանդելով ավերեց, շատերին գերեց: Եվ գտնելով Սելիմ անունով մի թուրք՝ հրամայեց քարկոծել նրան՝ իբրև հատուցում Իսմայիլի: Ապա մեծ ավարով վերադարձավ Թավրիզ, և քիչ օրեր անց մեռավ ինը հարյուր յոթանասունհինգ թվին (1526) թագավորելով քսանհինգ տարի: